

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2025 թվականի  
հունիսի 12-ի N 756-Լ որոշման

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### 1. ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների իրականացման ընթացքում առաջնորդվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի N 1112-Ն որոշմամբ, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ, ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 23-ի N 207-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշմամբ:

2. Վարչությունը, ՀՀ վարչապետի 2023 թվականի նոյեմբերի 29-ի N 1205-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2024 թվականի ծրագրի շրջանակում (այսուհետ՝ Ծրագիր) 2024 թվականի ընթացքում իրականացրել է ՀՀ պետական կառավարման մարմինների և տնտեսավարող սուբյեկտների կողմից ՀՀ պետական բյուջեից, հանրապետական նպատակային հատուկ ֆոնդերից և պետական այլ աղբյուրներից գումարների հատկացման և ծախսման, արտաբյուջետային միջոցների գոյացման ու օգտագործման, ՀՀ պետական բյուջեից տրամադրվող հատկացումների հաշվարկման համար ներկայացվող տվյալների արժանահավատության և ՀՀ պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության ստուգումներ:

3. Իրականացված ստուգումներով ընդգրկվել են նաև պետական և 50 տոկոսից ավելի պետական մասնակցությամբ ընկերություններում ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների ծախսման նպատակայնության և հիմնավորվածության, գնումների գործընթացի ճշտության և օրինականության, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասին համապատասխանող շահութաբաժինների հաշվարկման և ժամանակին ՀՀ պետական բյուջե վճարման ճշտության հարցերը:

4. Վարչության կողմից 2024 թվականին համապատասխան ստուգումներ են իրականացվել նաև ՀՀ իրավապահ մարմինների պահանջով՝ վերջիններիս կայացրած որոշումներով առաջադրած հարցերի շրջանակում:

5. ՀՀ ֆինանսների նախարարի հրամանների համաձայն Վարչության աշխատակիցները մասնակցել են ԱՊՀ մարմիններում իրականացված ֆինանսատնտեսական գործունեության փաստաթղթային ստուգումներին:

## 2. 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

6. Ծրագրով նախատեսված թվով 14 ստուգումներից 12-ը ավարտվել են հաշվետու ժամանակահատվածում (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ, «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ, «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ, Արարատի մարզպետի աշխատակազմ, «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ, «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, Պետական գույքի կառավարման կոմիտե): Ծրագրում ընդգրկված թվով 1 ստուգում (ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն) դեռևս ընթացքում է: Թվով 1 ստուգման դեպքում («Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ) հրապարակվել է համապատասխան ստուգման

հանձնարարագիր, սակայն այն հաշվառումից հանվել է ստուգումն իրականացնելու անհնարինության հիմքով (Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական գործի շրջանակում բոլոր բնօրինակ նյութերը առգրավված լինելու պատճառով):

7. Բացի վերը նշված ստուգումներից հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են թվով 16 հանդիպակաց ստուգումներ, մասնավորապես «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ում՝ «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի ստուգման շրջանակում, Առողջապահության նախարարությունում, Առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական պարագաների ապահովման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ-ի ստուգման շրջանակում, Արտաշատի, Մասիսի, Արարատի և Վեդու համայնքապետարաններում՝ Արարատի մարզպետի աշխատակազմի ստուգման շրջանակում, Ճամբարակի, Գավառի, Սևանի, Վարդենիսի ու Մարտունու համայնքապետարաններում՝ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ստուգման շրջանակում, «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ում, «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ Պետական գույքի կառավարման կոմիտեի ստուգման շրջանակում և «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցում, «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ Էկոնոմիկայի նախարարության ստուգման շրջանակում: Հանդիպակաց ստուգումների անհրաժեշտությունը պայմանավորված է եղել ստուգման ընթացքում ձեռք բերված և երրորդ անձանցից ստացված առանձին տեղեկությունների ճշտմամբ:

8. 2024 թվականին Ծրագրից դուրս իրավապահ մարմինների կայացրած որոշումների հիման վրա իրականացվել են թվով 3 ստուգումներ՝ «Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ում, «Փոքր Միեր կրթահամալիր» և նրա իրավահաջորդ «Նուբարաշենի մարզառագմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ում, «Նաիրիի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում, որոնք ավարտվել և արդյունքներն ամփոփվել են հաշվետու ժամանակաշրջանում: Թվով 1 ստուգման՝ «Վանաձորի պետական

բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի դեպքում ստուգումը սկսվել է 2023 թվականին, սակայն ավարտվել և արդյունքներն ամփոփվել են 2024 թվականի 1-ին եռամսյակում: Թվով 1 ստուգման դեպքում («Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ) հրապարակվել է համապատասխան ստուգման հանձնարարագիր, սակայն այն հաշվառումից հանվել է ստուգումն իրականացնելու անհնարինության հիմքով (անհրաժեշտ փաստաթղթերի բացակայություն):

9. Բացի այդ իրավապահ մարմինների կայացրած որոշումների հիման վրա նշանակվել են թվով 2 վերստուգումներ, որոնցից «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ-ում և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ում վերստուգումները սկսվել են 2023 թվականին, սակայն ավարտվել և արդյունքներն ամփոփվել են 2024 թվականի 1-ին եռամսյակում: «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ-ում լրացուցիչ փաստաթղթերի ի հայտ գալուց հետո իրականացվել է նաև կրկնակի ստուգում:

10. ՀՀ ֆինանսների նախարարի հրամանների համաձայն 2024 թվականին Վարչության աշխատակիցները մասնակցել են ԱՊՀ մարմիններում իրականացված թվով 3 ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների (ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդին կից մարտիկ-ինտերնացիոնալիստների հարցերով կոմիտե, ԱՊՀ մասնակից պետությունների տարածքում կազմակերպված հանցավորության և հանցագործությունների այլ վտանգավոր տեսակների դեմ պայքարը համակարգող բյուրո, ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի քարտուղարություն):

11. Այսպիսով, Վարչության կողմից հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են ընդամենը թվով 38 ստուգումներ:

12. 2024 թվականին, ինչպես և 2023 թվականին, պետական կառավարման մի շարք մարմիններում (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Պետական գույքի կառավարման կոմիտե, Արարատի մարզպետի աշխատակազմ, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ) ստուգումներն իրականացվել են ծրագրային բյուջետավորմանը համապատասխան ստուգումներ իրականացնելու սկզբունքով, ինչը հնարավորություն է տալիս հսկողություն

սահմանել ծրագրի կամ միջոցառման ողջ գործընթացի նկատմամբ՝ ներառելով բյուջետային հայտերի կազմման աշխատանքներից մինչև ծրագրի կամ միջոցառում իրականացնողների կողմից աշխատանքների ավարտման ամբողջական շղթան: Մասնավորապես, նշված սկզբունքի կիրառմամբ վերոհիշյալ թվով 4 պետական մարմիններում ընտրվել են թվով 11 բյուջետային ծրագրեր (միջոցառումներ):

13. 2024 թվականի ընթացքում իրականացված և ավարտված ստուգումներով արձանագրվել են ընդամենը 1,224.4 մլն դրամի խախտման փաստեր, որից վերականգնման (վերաձևակերպման) է առաջադրվել 362.6 մլն դրամը:

14. Վերականգնման չառաջադրված 861.8 մլն դրամի խախտումներից 533.2 մլն դրամն արձանագրվել է իրավապահ մարմինների պահանջով իրականացված ստուգումների արդյունքում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներ են արձանագրվել 3.6 մլն դրամի չափով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջների խախտմամբ ավել է վճարվել ընդհանուր 156.7 մլն դրամ աշխատավարձ, ստուգման պահի դրությամբ ընդհանուր գումարով 2.5 մլն դրամի չափով չեն հաշվարկվել ժամկետանց պայմանագրերի նկատմամբ տույժեր, որոնք ենթակա են վերականգնման ճշտված վերահաշվարկներից հետո, ընդհանուր գումարով 139.3 մլն դրամի չափով վճարվել է նախահաշվով չնախատեսված պարգևատրումներ և դրամական օգնություններ, 12.5 մլն դրամի չափով նորմայից ավել նախահաշվային արժեք է հաշվարկվել, 12.8 մլն դրամի չափով խախտվել են պայմանագրերի կետերի պահանջներ և 1.2 մլն դրամի չափով կատարվել են ոչ նպատակային, ոչ արդյունավետ ծախսեր:

15. Բացի այդ առկա են անհամապատասխանություններ, որոնց արժանահավատությունը և իսկությունը հնարավոր է պարզել իրավասու մարմինների կողմից համապատասխան իրավական գնահատական տալուց հետո, որի կապակցությամբ թվով 2 դեպքում («Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ, Պետական գույքի կառավարման կոմիտե) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից առաջարկվել է քննարկել իրավական գնահատական տալու նպատակահարմարությունը:

16. Վերականգնման (վերաճնակերպման) ենթակա 362.6 մլն դրամից 277.0 մլն դրամն առաջադրվել է մուտքագրման ՀՀ պետական բյուջե, 2.3 մլն դրամը ենթակա է վերականգնման կազմակերպությունների հաշիվներին, 18.1 մլն դրամը՝ համայնքային բյուջեներ, 65.2 մլն դրամը՝ պետական բյուջեից ֆինանսավորման գումարներից պակասեցման:

17. Հաշվետու ժամանակաշրջանում վերականգնվել է ընդամենը 406.2 մլն դրամ (այդ թվում 187.1 մլն դրամը՝ 2024 թվականին կատարված ստուգումներով արձանագրված գումարներից, 219.1 մլն դրամը՝ նախորդ ժամանակաշրջաններում կատարված ստուգումներով արձանագրված գումարներից):

18. Վարչության կողմից կատարված ստուգումներով արձանագրված գումարներից 2024 թվականի ընթացքում վերականգնված կամ վերաճնակերպված գումարների վերաբերյալ տեղեկատվությունն ըստ առանձին տարիների ներկայացվում է ստորև.

(հազ. դրամ)

| Արձանագրման տարեթիվ                                      | 2024 թվականին վերականգնվել կամ վերաճնակերպվել է |                                  |                           |                              |                                  |                                       |
|----------------------------------------------------------|-------------------------------------------------|----------------------------------|---------------------------|------------------------------|----------------------------------|---------------------------------------|
|                                                          | Ընդամենը                                        | Վերականգնվել է ՀՀ պետական բյուջե | Վերականգնվել է աշխատանքով | Պակասեցվել է ֆինանսավորումից | Մուտքագրվել է համայնքային բյուջե | Մուտքագրվել է կազմակերպության հաշիվին |
| 1                                                        | 2                                               | 3                                | 4                         | 5                            | 6                                | 7                                     |
| 2024 թվականին ավարտված ստուգումներով վերականգնված գումար | 187,105.0                                       | 165,691.0                        | 2,474.8                   | 18,394.4                     | 491.1                            | 53.7                                  |
| 2023 թվականին ավարտված ստուգումներով վերականգնված գումար | 211,275.3                                       | 191,487.6                        | 7,919.5                   | 954.4                        | 4,801.2                          | 6,112.6                               |
| 2017 թվականին ավարտված ստուգումներով վերականգնված գումար | 7,800.0                                         | 7,800.0                          | -                         | -                            | -                                | -                                     |
| Ընդամենը 2024 թվականի ընթացքում վերականգնված գումար      | 406,180.3                                       | 364,978.6                        | 10,394.3                  | 19,348.8                     | 5,292.3                          | 6,166.3                               |

19. 2024 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման հսկողության արդյունքներով արձանագրված խախտումների և թերությունների վերացման ու ռիսկերի հետագա զսպման նպատակով յուրաքանչյուր ստուգման ավարտից հետո, ՀՀ ֆինանսների նախարարի կողմից համապատասխան առաջարկություններով

գրություններ են հասցեագրվել ստուգված կազմակերպություններ և պատկան վերադաս մարմիններ: Վերջիններիս կողմից խախտումների վերացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ ստացվող տեղեկությունների վերլուծությունը և հաշվետվությունում արտացոլված տվյալները հիմք են տալիս եզրակացնելու, որ ինչպես վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունները, այնպես էլ պատկան վերադաս մարմինները պատշաճ միջոցներ չեն ձեռնարկել ստուգումներով արձանագրված խախտումների և թերությունների վերացման, ռիսկերի հետագա զսպման, ինչպես նաև արձանագրված գումարների վերականգնմանն ուղղությամբ:

20. 2024 թվականի ընթացքում Ծրագրով, ՀՀ իրավապահ մարմինների պահանջով և ՀՀ ֆինանսների նախարարի հրամանների համաձայն իրականացված ստուգումների ամփոփ արդյունքները ներկայացված են կից NN 1, 2, 3, 4 և 5 հավելվածներում:

21. 2024 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման հսկողության ծրագրով հաշվետու ժամանակաշրջանում իրականացված ստուգումներն առավել մանրամասն ներկայացվում են ստորև:

### 3. ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

#### ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

22. Ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1) «Հիմնական մասնագիտացված հանրակրթություն» և «Միջնակարգ մասնագիտացված հանրակրթություն» ծրագրերի մասով ուսումնական հաստատությունների կողմից ներկայացված փաստաթղթերի (սովորողների շարժի վերաբերյալ տեղեկանքների) համադրման արդյունքում թվով 9 կազմակերպություններից 8-ը 2021-2023 թվականների համար կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորությունները լրիվ ծավալով չեն մատուցել՝ փաստացի սովորողների թիվը պայմանագրերով նախատեսվածի համեմատությամբ պակաս է կազմել 173.9-ով: Պակաս մատուցված ծառայությունների դիմաց 2021-2023 թվականներին ավել ֆինանսավորված գումարը կազմում է 75,518.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

23. Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում քննարկել ստուգմամբ արձանագրված փաստերը, միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումներն ու թերությունները վերացնելու և հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ.

2) «Հիմնական մասնագիտացված հանրակրթություն» և «Միջնակարգ մասնագիտացված հանրակրթություն» ծրագրերով հանձնարարել կազմակերպությունների ղեկավարներին՝ ապահովել նախարարության հետ կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը: Պայմանագրերով նախատեսված ծառայությունների թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել պայմանագրային գումարները: Գումարների պահանջ ներկայացնելիս հաշվի առնել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակներն ու ուսանողների փաստացի թվաքանակները.

3) Ստուգման ակտում վերականգնման առաջադրված 75,518.0 հազ. դրամը վերականգնել ՀՀ պետական բյուջեի «նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին և հիմնավորող փաստաթղթերի պատճենները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն:

24. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 75,518.0 հազ. դրամի խախտման փաստեր, որից վերականգնվել է 45,302.4 հազ. դրամը:

#### 4. «ԵՐԵՎԱՆԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

25. Ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1) «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից խախտվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի 2019 թվականի ապրիլի 29-ի N 274-Ա հրամանի պահանջները և տարակարգ ստացած

ուսուցչուհուն, որը դպրոցի 25 դասաժամից բացի ունեցել է նաև 3 դասաժամ ուսումնարանում, հաշվարկվել է 10 տոկոս հավելավճար նաև ուսումնարանի դասաժամերի համար, որի արդյունքում 2021 թվականի համար ավել հաշվարկված և վճարված հավելավճարի գումարը կազմել է 23.9 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե.

2) կազմակերպության կողմից խախտվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի նոյեմբերի 2-ի N 1687-Ա հրամանի դրույթները և սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման արդյունքում 70-79 տոկոս ստացած կազմակերպության մաթեմատիկա առարկա դասավանդող ուսուցչուհուն չի հատկացվել 2021 թվականի հոկտեմբեր ամսվա մանկավարժական դրույքի 30 տոկոս հավելավճարը՝ 50.2 հազ. դրամ, որը ենթակա է վճարման աշխատակցին, իսկ անհնարինության դեպքում ետ վճարել պետական բյուջեի համապատասխան գանձապետական հաշվին.

3) կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերի (սովորողների շարժի վերաբերյալ տեղեկանքների) և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ կնքված սուբսիդիայի տրամադրման վերաբերյալ համաձայնագրերի համադրման արդյունքում արձանագրվել է, որ 2021-2022 թվականների համար կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորությունները լրիվ ծավալով չեն մատուցվել՝ փաստացի սովորողների թիվը համաձայնագրերով նախատեսվածի համեմատությամբ պակաս է կազմել 6.6 սովորողով: Պակաս մատուցված ծառայությունների դիմաց 2021-2023 թվականներին ավել ֆինանսավորված գումարը կազմում է 4,049.1 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե.

4) կազմակերպության կարիքների համար ճաշարանային և հանրային սննդի կազմակերպման ծառայությունների մատուցման պետական գնման մասին 2021-2023 թվականների համար կնքված պայմանագրերի ստուգմամբ պարզվել է, որ 2021 թվականի ընթացքում ավել հայտ է ներկայացվել 23 անձի համար, 2023 թվականի ընթացքում՝ 4 անձի համար, որի հետևանքով ավել վճարված գումարը կազմում է 28.2 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե.

5) կազմակերպության կողմից խախտվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված օտարերկրյա պետություններ գործուղվող աշխատողների գործուղման ծախսերի չափերը, որի արդյունքում 2021-2022 թվականների համար օրապահիկի մասով ավել վճարված գումարը՝ 158.8 հազ. դրամ ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե.

6) ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման վերաբերյալ կազմակերպությունների հետ կնքած թվով 4 պայմանագրերի մասով կատարողների կողմից խախտվել են համապատասխան պայմանագրերով սահմանված ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման ժամկետները, որի հետևանքով կիրառված տույժերի արդյունքում վերջիններիս կողմից կազմակերպությանը վճարման ենթակա տույժի գումարը կազմել է 433.6 հազ. դրամ.

7) կազմակերպության կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 22-ի N 526-Ն որոշման 32-րդ կետի «գ» ենթակետի պահանջները, 2021 թվականին կնքված մեկ պայմանագրի մասով՝ պայմանագրային արժեքը 2,961.0 հազ. դրամ, բացակայում էին պայմանագրի և որակի ապահովման մասով տուժանքի մասին համաձայնագրերը:

26. Ընդամենը ստուգման արդյունքներով ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարը կազմում է 4,260.0 հազ. դրամ, իսկ կազմակերպությանը վճարման ենթակա տույժի գումարը՝ 433.6 հազ. դրամ:

27. Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում քննարկել ստուգմամբ արձանագրված փաստերը, միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումներն ու թերությունները վերացնելու և հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ.

2) հանձնարարել կազմակերպությանը՝

ա. ստուգման արդյունքներով արձանագրված խախտումների գումարը՝ 4,260.0 հազ. դրամ, փոխանցել ՀՀ պետական բյուջեի «նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին,

բ. ձեռնարկել միջոցներ 2021 թվականի հոկտեմբեր ամսվա չվճարված հավելավճարը՝ գումարով 50.2 հազ. դրամ, աշխատակցին վճարելու ուղղությամբ, իսկ անհնարինության դեպքում ետ վճարել պետական բյուջեի համապատասխան գանձապետական հաշվին,

գ. ապահովել ստուգման արդյունքներով արձանագրված 433.6 հազ. դրամի հաշվարկված տույժերի վերականգնումը կազմակերպության գանձապետական հաշվին,

դ. ուժեղացնել հսկողությունը ՀՀ կառավարության որոշումների և ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանների պահանջների կատարման նկատմամբ, կազմակերպության կարիքների համար ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռքբերումներն իրականացնել բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

28. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 4,693.6 հազ. դրամի խախտման փաստեր, որից վերականգնում չի եղել:

## 5. «ՄՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»

### ՓԲԸ

29. Ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1) «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն խախտելով տնօրենի պաշտոնակատարի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 7-ին հաստատված «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության 2-րդ՝ «Ֆինանսական հաշվառման մեթոդաբանության ընտրված տարբերակներ» բաժնի 2.1 «Հիմնական միջոցներ» կետով սահմանված դրույթները՝ այն է, մեքենաներ և սարքավորումներ դասի համար սահմանված է չափման հիմունքը՝

սկզբնական արժեքով, օգտակար ծառայության (նվազագույն) ժամկետը՝ 5 տարի (կամ 20%), մաշվածության հաշվարկման մեթոդը՝ գծային, իսկ մինչև 50 հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցների օգտակար ծառայությունը սահմանվել է 1 տարի, 2021-2023 թվականներին առանձին սարքավորումների մասով հիմնական միջոցի մաշվածությունը ավել է հաշվարկել (20%-ից ավելի տոկոսադրույքով) և ծախսագրել 4,599.7 հազ. դրամի չափով, իսկ արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքների մասով մինչև 50 հազ. դրամ արժողությամբ նախկինում ձեռք բերված հիմնական միջոցների մաշվածությունը հաշվարկել է մեկ տարվանից ավել ժամկետով, որի արդյունքում ավել է ծախսագրվել 3,944.0 հազ. դրամ: Ընկերությունը չի պահպանել ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 6-րդ կետի «գ» ենթակետի պահանջը և 2021 թվականի շահութաբաժնի հաշվարկում շահութաբաժնի հաշվարկման բազան չի ավելացրել ընկերության գործունեությանը չառնչվող ծախսերի չափով՝ գումարով 665.0 հազ. դրամ: Վերոգրյալի արդյունքում 2021-2023 թվականներին լրացուցիչ հաշվարկվել է 4,604.3 հազ. դրամի շահութաբաժին: Ստուգման արդյունքում 2021 թվականի համար լրացուցիչ հաշվարկված շահութաբաժնի գումարների նկատմամբ ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 9-րդ կետով սահմանված պատժամիջոցի կիրառման արդյունքում 2021-2022 թվականների համար լրացուցիչ հաշվարկված՝ ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարները սահմանված ժամկետում ՀՀ պետական բյուջե չվճարելու համար հաշվարկվել է տույժ՝ 652.5 հազ. դրամի չափով: Այսպիսով, ընկերությունում կատարված ստուգման արդյունքներով 2021-2023 թվականների համար ՀՀ պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա շահութաբաժնի գումարը կազմում է 5,256.8 հազ. դրամ, ներառյալ 652.5 հազ. դրամի տույժերի գումարները:

30. 2021-2023 թվականների համար ընկերության և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության միջև կնքված ստանդարտների մշակման ծառայությունների մատուցման պայմանագրերի 7.1-ին կետի համաձայն վերջիններս ուժի մեջ են մտել ստորագրման պահին (ամեն տարի ապրիլ ամսին),

սակայն նախարարության կողմից յուրաքանչյուր տարի հաստատված եկամուտների և ծախսերի նախահաշվի և ընկերության հաստիքացուցակի հիման վրա վերոնշյալ աշխատանքներն իրականացնող աշխատակիցների վարձատրությունն իրականացվել է յուրաքանչյուր տարվա հունվար ամսվանից:

31. Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1) ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում քննության առնել ստուգմամբ արձանագրված փաստերը, միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումներն ու թերությունները վերացնելու և հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ.

2) ձեռնարկել միջոցներ նախարարության և ընկերության միջև կնքվող պայմանագրերը ֆինանսական տարվա սկզբում կնքելու ուղղությամբ.

3) հանձնարարել ընկերությանը՝

ա. հիմնական միջոցների մաշվածությունը հաշվարկել ՀՀ հարկային օրենսգրքի և ընկերության տնօրենի պաշտոնակատարի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 7-ին հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ սահմանված դրույթներով,

բ. ՀՀ պետական բյուջեին հասանելիք շահութաբաժինները հաշվարկելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն և 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշումների պահանջներով,

գ. 5,256.8 հազ. դրամի լրացուցիչ հաշվարկված շահութաբաժնի գումարը փոխանցել ՀՀ պետական բյուջեի «բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենդներ» գանձապետական հաշվին:

32. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 5,256.8 հազ. դրամի խախտման փաստեր, որն ամբողջությամբ վերականգնվել է:

6. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ»

ՓԲԸ

33. Ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1) «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից խախտվել են տրանսպորտային միջոցների համար սահմանված վազքի և ծառայության ժամկետների նորմաները և թվով երկու դեպքով տրանսպորտային միջոցներին մարտկոց և անվադողեր են տրամադրել սահմանված ժամկետից շուտ.

2) 2021 թվականի օգոստոսի 25-ին կնքված N ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/15 պայմանագրի 4.1-ին կետի պահանջը խախտելու արդյունքում 5,369.2 հազ. դրամի աշխատանքները պայմանագրով սահմանված ժամկետից 20 աշխատանքային օր ուշացումով կատարելու պայմաններում պայմանագրի 6.2-րդ կետի համաձայն հաշվարկվել է տույժ 53.7 հազ. դրամի չափով, որը ենթակա է վճարման ընկերության հաշվարկային հաշվին.

3) ընկերությունը, խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջը, առանց համապատասխան պայմանագիր կնքելու, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կնքած պայմանագրի հիման վրա և վերջինիս հանձնարարությամբ 1,678.0 հազ. դրամ է փոխանցել ապահովագրական ծառայությունների դիմաց.

4) ընկերությունը, խախտելով ՀՀ հարկային օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, 2021-2023 թվականների ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ ձև 2-ի ծախսերի հաշվարկում ներառել է լուծարվող և օտարվող հիմնական միջոցների կուտակված ամորտիզացիոն ծախսերն ամբողջությամբ, որի արդյունքում ավել ծախս է հաշվարկվել 12,869.0 հազ. դրամ և գուտ շահույթի մեծությունը շահութահարկի ծախսի նվազեցումից հետո պակասել է նույն գումարի չափով.

5) ընկերությունը 2021-2023 թվականների շահութաբաժնի հաշվարկը լրացնելիս ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 6-րդ կետի «գ» ենթակետի պահանջին համապատասխան շահութաբաժնի հաշվարկման բազան չի ավելացրել ընկերության գործունեությանը չառնչվող ծախսերի չափով, այդ թվում՝ ընկերության տարածքում գտնվող բազմամյա տնկարկների մաշվածության չափով՝ 864.4 հազ. դրամ, դրանց խնամքն իրականացնող այգեպանին հաշվարկված և վճարված աշխատավարձի չափով՝ 3,778.2 հազ. դրամ,

ինչպես նաև վերը նշված բազմամյա տնկարկների ոռոգման նպատակով Երևանի ջրօգտագործող ընկերությանը 01.06-30.09.2021թ. ժամանակահատվածում վճարված ոռոգման ջրի վարձավճարի չափով՝ 914.8 հազ. դրամ, իսկ 2022 թվականին՝ ընկերության կողմից վերաքննիչ բողոքներ ներկայացնելու նպատակով փաստաբանական ծառայությունների դիմաց թվով երկու դեպքով կատարված վճարումների չափով՝ 671.4 հազ. դրամ, ընդամենը՝ 6,228.8 հազ. դրամ: 2021-2023 թվականներին ընկերությունը հաշվի չի առել, որ ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 4-ի N 1222-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման մեջ և 6-րդ կետի «գ» ենթակետով թույլատրվել է ֆիզիկական անձանց օգնության, սննդի կազմակերպման, նրանց համար սոցիալ-մշակութային միջոցառումների կազմակերպման և համանման այլ ծախսերի համար կարող են օգտագործել ֆինանսական տարվա համախառն եկամտի մինչև 0.25 տոկոսը և շահութաբաժնի հաշվարկում շահութաբաժնի հաշվարկման բազան ավելացրել է 5,387.0 հազ. դրամի չափով, ինչի արդյունքում գուտ շահույթի մեծությունը շահութահարկի ծախսի նվազեցումից հետո ավել է ցույց տրվել նույն գումարի չափով: Վերը նշվածի արդյունքում ընկերության 2021-2023 թվականների տարեկան շահութաբաժնի հաշվարկման բազան ենթակա է ավելացման 13,710.8 հազ. դրամի չափով, որից լրացուցիչ հաշվարկվել է 6,855.4 հազ. դրամի շահութաբաժին: 2021-2022 թվականների համար լրացուցիչ հաշվարկված շահութաբաժնի գումարների նկատմամբ ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 9-րդ կետով սահմանված պատժամիջոցի կիրառման արդյունքում շահութաբաժնի գումարը սահմանված ժամկետում ՀՀ պետական բյուջե չվճարելու համար հաշվարկվել է տույժ 427.4 հազ. դրամի չափով:

34. Ընդամենը ստուգման արդյունքներով արձանագրվել են 7,336.5 հազ. դրամի խախտումներ, որից ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարը կազմում է 7,282.8 հազ. դրամ, իսկ ընկերության հաշվարկային հաշվին վերականգնման ենթակա գումարը՝ 53.7 հազ. դրամ:

35. Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1) ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում քննության առնել ստուգման նյութերը, միջոցներ ձեռնարկել ստուգմամբ արձանագրված խախտումների ու թերությունների վերացման, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ.

2) հանձնարարել ընկերությանը՝

ա. մշակել գործուն մեխանիզմներ ձեռք բերված վառելիքի և ավտոպահեստամասերի ծախսն արդյունավետ վերահսկելու և սահմանված կարգով հաշվառում իրականացնելու ուղղությամբ,

բ. ընկերության կարիքների համար ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռքբերումներն իրականացնել բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան,

գ. ապահովել պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու համար ստուգման արդյունքներով արձանագրված 53.7 հազ. դրամի հաշվարկված տույժերի վերականգնումը ընկերության հաշվարկային հաշվին,

դ. ՀՀ պետական բյուջեին հասանելիք շահութաբաժինները հաշվարկելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն և 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշումների պահանջներով,

ե. 7,282.8 հազ. դրամի լրացուցիչ հաշվարկված շահութաբաժնի գումարը (ներառյալ 427.4 հազ. դրամի տույժերի գումարները) փոխանցել ՀՀ պետական բյուջեի «բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենդներ» գանձապետական հաշվին:

36. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 7,336.5 հազ. դրամի խախտման փաստեր, որն ամբողջությամբ վերականգնվել է:

7. «Վ. Ա. ՖԱՆԱՐՁՅԱՆԻ ՈՒՌՈՒՅՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՓԲԸ

37. Ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1) ՀՀ առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջանի ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն խախտելով «Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ առողջապահության նախարարության և ընկերության միջև 2021-2023 թվականների համար կնքված պայմանագրերին կից հատուկ պայմանների պահանջները, 2021-2023 թվականներին պետական պատվերի շրջանակներում բուժված թվով 46 հիվանդների բուժման համար անհրաժեշտ դեղորայքը և բժշկական պարագաներն ապահովել է մասնակի կամ ոչ ամբողջությամբ: Պայմանագրերին կից հատուկ պայմաններով սահմանված պատասխանատվության նորմերի կիրառման արդյունքում (կատարողականից նվազեցվում է տվյալ դեպքի արժեքի 25%-ը) ՀՀ պետական բյուջե ենթակա է վերականգնման 5,608.6 հազ. դրամ:

2) ընկերությունը, խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 28-ի N 1391-Ա հրամանով հաստատված կարգի 10-րդ կետի պահանջները թվով 979 դեպքում չի ապահովել դուրս գրվելուց հիվանդի, խնամողի կամ հարազատի կողմից նշանակման թերթիկի ստորագրումը, իր կողմից բերված դեղերի կամ դեղերն ամբողջապես բուժհաստատության կողմից տրամադրելու մասին գրառումը: Նշված խախտման համար պայմանագրերին կից հատուկ պայմաններով սահմանված պատասխանատվության նորմերի կիրառման արդյունքում 979 դեպքի համար ՀՀ պետական բյուջե ենթակա է վերականգնման 4,895.0 հազ. դրամ:

3) ընկերությունը շահութաբաժնի հաշվարկը լրացնելիս չի պահպանել ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 6-րդ կետի «գ» ենթակետի պահանջը և շահութաբաժնի հաշվարկման բազան չի ավելացրել ընկերության գործունեության հետ կապ չունեցող ծառայությունների արժեքի չափով, որի հետևանքով շահութաբաժնի գծով պակաս գումար է հաշվարկվել և ՀՀ պետական բյուջե վճարվել ընդամենը 14,127.1 հազ. դրամ:

38. Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1) ՀՀ առողջապահության նախարարությունում քննության առնել ստուգմամբ արձանագրված փաստերը, միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումներն ու թերությունները վերացնելու և հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ.

2) հանձնարարել ընկերությանը՝

ա. ապահովել ՀՀ առողջապահության նախարարության և ընկերության միջև «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» կնքված պայմանագրերին կից հատուկ պայմանների կատարումը,

բ. ՀՀ պետական բյուջեին հասանելիք շահութաբաժինները հաշվարկելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման պահանջներով,

գ. ՀՀ պետական բյուջե փոխանցել ակտով արձանագրված 24,630.7 հազ. դրամը և հիմնավորող փաստաթղթերի պատճենները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն.

3) պետական պատվերի շրջանակներում կատարված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գծով ակտով արձանագրված ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա 10,503.6 հազ. դրամը փոխանցել ՀՀ պետական բյուջեի «նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին, իսկ 14,127.1 հազ. դրամի լրացուցիչ հաշվարկված շահութաբաժնի գումարը (ներառյալ 557.7 հազ. դրամի տույժի գումարը)՝ ՀՀ պետական բյուջեի «բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենդներ» գանձապետական հաշվին և հիմնավորող փաստաթղթերի պատճենները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն:

39. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 24,630.7 հազ. դրամի խախտման փաստեր, որն ամբողջությամբ վերականգնվել է:

## 8. «ՍԵՎԱՆԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

40. Ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1) «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 15-ի N 1080-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ, 12-րդ, 16-րդ, 46-րդ և 48-րդ կետերի պահանջները՝ ընկերության տնօրենի կողմից չի նշանակվել պատասխանատու անձ՝ N 1, 2 և 3 դեղատոմսային ձևաթղթի ստացման, պահպանման, պաշարների լրացման և հաշվառման համար, ինչպես նաև N 1, 2 և 3 դեղատոմսային ձևաթղթի հաշվառումը չի իրականացվել առանձնացված մատյանում: ՀՀ առողջապահության նախարարության և ընկերության միջև 2021-2023 թվականներին կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մասին» պայմանագրերին կից հատուկ պայմանների պատասխանատվության նորմի կիրառման արդյունքում կատարողականներից նվազեցման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 400.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե.

2) 2021-2023 թվականների ընթացքում 113 դեպքով չի ապահովվել դուրս գրվելուց հիվանդի, խնամողի կամ հարազատի կողմից նշանակման թերթիկի ստորագրումը, իր կողմից բերված դեղերի կամ դեղերն ամբողջապես բուժհաստատության կողմից տրամադրելու մասին գրառումը, ինչով խախտվել են ՀՀ առողջապահության նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 28-ի N 1391-Ա հրամանով հաստատված կարգի 10-րդ կետի և Պայմանագրին կից հատուկ պայմանների «Ա» գլխի 1-ին կետի պահանջները: Պայմանագրով սահմանված պատասխանատվության նորմի կիրառման արդյունքում ՀՀ պետական բյուջե ենթակա է վերականգնման 565.0 հազ. դրամ.

3) 2021-2022 թվականների ընթացքում թվով 6 դեպքով խախտվել են Պայմանագրին կից հատուկ պայմանների «Ա» գլխի 5-րդ կետի պահանջները՝ հիվանդների բուժման համար անհրաժեշտ դեղամիջոցները և բժշկական պարագաներն ընկերության կողմից ապահովվել են մասնակի կամ ոչ ամբողջությամբ: Պայմանագրերին կից հատուկ պայմաններով սահմանված պատասխանատվության

նորմերի կիրառման արդյունքում ՀՀ պետական բյուջե ենթակա է վերականգնման 38.0 հազ. դրամ.

4) 2021-2023 թվականների ընթացքում բուժառուները տարբեր պատճառներով այլ բժշկական կազմակերպություններ են տեղափոխվել և համաձայն ընկերության կողմից տրամադրված բացատրագրի բուժման ուղեգրելիս դուրսգրում չի կատարվել, քանի որ բուժառուներին յուրաքանչյուր օրվա համար տրամադրվել է սնունդ, որը բուժառուին է փոխանցվել ընկերության աշխատակցի կողմից, ինչի վերաբերյալ առկա չէին սննդի հանձնման և ընդունման, ինչպես նաև սննդի տեղափոխման և սննդի տրամադրման կարգի վերաբերյալ փաստաթղթեր: Անհիմն կատարված ծախսերի գումարը կազմում է 803.5 հազ. դրամ, որոնց արժանահավատությունը հնարավոր է պարզել համապատասխան իրավասու մարմինների կողմից իրավական գնահատական տալուց հետո.

5) ընկերության կողմից խախտվել են ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 711-Ն և 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1724-Ն որոշումներով հաստատված հոգեբուժական կազմակերպություններում պահվող անձանց սննդի օրական նվազագույն և օրական միջին չափաբաժինները: 2021-2023 թվականների և 2024 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ընկերության կողմից հատկացվել է որոշմամբ հաստատված օրական միջին չափաքանակներով չնախատեսված և չափաքանակներից ավել սնունդ՝ ընդհանուր 27,257.1 հազ. դրամ արժեքով.

6) առանց հաստատված նախահաշիվներում փոփոխություններ կատարելու ընկերության կողմից 2021-2023 թվականներին և 2024 թվականի 1-ին եռամսյակում հաշվարկվել և վճարվել է 135,298.8 հազ. դրամ պարգևավճար.

7) ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի հունվարի 22-ի N 74-Ա հրամանի հավելվածի Աղյուսակ 2-ի վարչական անձնակազմ տողի նվազագույն և առավելագույն գործակցի սխալ կիրառման արդյունքում 2021-2023 թվականներին և 2024 թվականի 1-ին եռամսյակում առանձին վարչական աշխատակիցներին դրույքային աշխատավարձն ավել է հաշվարկվել և վճարվել՝ ընդհանուր գումարով 55,842.1 հազ. դրամ.

8) խախտվել է ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 670-Ն որոշման 1-ին կետը, համաձայն որի բարձր լեռնային վայրերում աշխատելու դեպքում տրվող հավելումը՝ 8.0 հազ. դրամի չափով վերաբերում է պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց: Արդյունքում 2021-2023 թվականներին և 2024 թվականի 1-ին եռամսյակում ընկերության աշխատակիցներին ավել է հաշվարկվել և վճարվել հավելավճար 69,027.5 հազ. դրամ ընդհանուր գումարով:

9) խախտվել է ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N 1698-Ն որոշման հավելվածի ծանր, վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկի 24-րդ կետը, համաձայն որի հոգերուժական (հոգենյարդաբանական) բուժկանխարգելիչ հիմնարկներին տրվում է հավելում 30%-ի չափով: Սակայն 2021-2023 թվականներին և 2024 թվականի 1-ին եռամսյակում կաթսայատան պատասխանատուի և հնոցապանների ծանր, վնասակար աշխատանքների համար տրվել է վտանգավորության գումար 50%-ի չափով կամ ավել վտանգավորության գումար է հաշվարկվել և վճարվել ընդհանուր գումարով 4,545.7 հազ. դրամ:

10) 2021-2023 թվականներին ընկերության կողմից կնքված թվով 3 ծառայությունների մատուցման պայմանագրերով, առանց պայմանագրային գին նշելու, միայն հանձնման-ընդունման ակտերի հիման վրա վճարվել է 2,547.7 հազ. դրամ, իսկ մեկ դեպքով վճարումը կատարվել է առանց հանձնման-ընդունման ակտի՝ 125.0 հազ. դրամի չափով, որը ենթակա է վերականգնման ընկերության հաշվարկային հաշվին:

11) ընկերությունը խախտել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2000 թվականի հունիսի 2-ի N 102 հրամանի օրինակելի ձևով սահմանված պահանջները հիմնական միջոցների մասով, մասնավորապես բացակայում էին հիմնական միջոցների գույքային համարները:

12) ընկերությունը՝ խախտելով ՀՀ հարկային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջները, ինչպես շահութահարկի, այնպես էլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ ձև 2-ի ծախսերի հաշվարկում ներառել է

լուծարվող և օտարվող հիմնական միջոցների լուծարման ծախսերը և հաշվեկշռային արժեքները, իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքում ներառել է չհիմնավորված ծախսեր, ինչպես նաև ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 6-րդ կետի «գ» ենթակետի պահանջին համապատասխան շահութաբաժնի հաշվարկման բազան չի ավելացրել ընկերության գործունեությանը չառնչվող ծախսերի չափով, որի արդյունքում 2021-2022 թվականների համար ՀՀ պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա շահութաբաժնի գումարը կազմել է 6,308.2 հազ. դրամ, ներառյալ 632.3 հազ. դրամի տույժերի գումարները.

13) ընկերությունը՝ խախտելով ՀՀ հարկային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ ձև 2-ի ծախսերի հաշվարկում ներառել է լուծարվող և օտարվող հիմնական միջոցների լուծարման ծախսերը և հաշվեկշռային արժեքները, իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքում ներառել է չհիմնավորված ծախսեր, արտասովոր դեպքերից վնասի չափն անհիմն կերպով ավելացրել է, ինչպես նաև ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 6-րդ կետի «գ» ենթակետի պահանջին համապատասխան շահութաբաժնի հաշվարկման բազան չի ավելացրել ընկերության գործունեությանը չառնչվող ծախսերի չափով, որի արդյունքում 2023 թվականի համար հաշվարկվել է ՀՀ պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա շահութաբաժնի գումարը 8,750.5 հազ. դրամի չափով.

14) ընդամենը ստուգման արդյունքներով արձանագրվել են 311,384.1 հազ. դրամի խախտումներ, որից ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարը կազմում է 16,062.5 հազ. դրամ, իսկ ընկերության հաշվարկային հաշվին վերականգնման ենթակա գումարը՝ 125.0 հազ. դրամ:

41. Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1) ՀՀ առողջապահության նախարարությունում քննության առնել ստուգմամբ արձանագրված փաստերը, միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումներն ու թերությունները վերացնելու և հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ.

2) հանձնարարել ընկերությանը՝

ա. ուժեղացնել հսկողությունը ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված չափորոշիչների պահանջների պահպանման ուղղությամբ,

բ. խստորեն պահպանել 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1724-Ն որոշման պահանջները,

գ. բացառել հաստատված նախահաշվով չնախատեսված ծախսերի կատարումը, մասնավորապես աշխատակիցներին վճարվող պարգևավճարների տրամադրումը,

դ. ընկերության վարչական աշխատողների աշխատավարձերը համապատասխանեցնել ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի հունվարի 22-ի N 74-Ա հրամանի հավելվածի Աղյուսակ 2-ով սահմանված գործակիցներին,

ե. ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 670-Ն որոշման 1-ին կետով սահմանված բարձր լեռնային վայրերում աշխատողներին 8.0 հազ. դրամի հավելումը ընկերության աշխատակիցներին հատկացնել միայն համապատասխան իրավական ակտի առկայության դեպքում,

զ. ապահովել ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N 1698-Ն որոշման հավելվածի 24-րդ կետի պահանջների կատարումը,

է. ֆիզիկական անձանց հետ քաղաքացիաիրավական պայմանագրեր կնքելիս առաջնորդվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված պահանջներով,

ը. ձեռնարկել միջոցներ ստացված ծառայությունների գծով հանձնման-ընդունման ակտերի գումարից ավել վճարված 125.0 հազ. դրամը ընկերության հաշվարկային հաշվին վերականգնելու ուղղությամբ,

թ. ապահովել նախարարության և ընկերության միջև կնքված պայմանագրերին կից հատուկ պայմանների պահանջների կատարումը,

Ժ. ՀՀ պետական բյուջեին հասանելի շահութաբաժինները հաշվարկելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն և 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշումների պահանջներով,

Ժա. պետական պատվերի շրջանակներում կատարված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գծով արձանագրված ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա 1,003.8 հազ. դրամը փոխանցել ՀՀ պետական բյուջեի «նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին, իսկ 15,058.7 հազ. դրամի լրացուցիչ հաշվարկված շահութաբաժնի գումարը ՀՀ պետական բյուջեի «բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենտներ» գանձապետական հաշվին:

42. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 16,187.5 հազ. դրամի խախտման փաստեր, որից վերականգնվել է 16,062.5 հազ. դրամը:

#### 9. «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ

43. Ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1) «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից խախտվել է «Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ առողջապահության նախարարության և ընկերության միջև 2023 թվականի համար կնքված թիվ ՀՀ ԱՆ ՄԱԾՁԲ-2023/20 պայմանագրի 4.1-ին կետի պահանջները, արդյունքում ստանձնած պարտավորությունների չկատարման համար հաշվարկված տուգանքի չափը կազմել է 956,3 հազ. դրամ, իսկ տույժի չափը՝ 95.6 հազ. դրամ, ընդամենը 1,051.9 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

2) ընկերությունը 2021 թվականի տարեկան ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ եկամուտների չափը պակաս է ցույց տվել 2,210.8 հազ. դրամի եկամուտներին վերաբերող շնորհներից ստացած եկամուտների չափով.

3) ընկերությունը չի պահպանել ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 6-րդ կետի «դ» ենթակետի պահանջը և 2022 թվականի շահութաբաժնի հաշվարկում շահութաբաժնի հաշվարկման բազան չի ավելացրել բաժնետիրոջ լիազորություններ իրականացնող պետական կառավարման մարմիններին և այլ մարմիններին տրամադրված հատկացումների գումարի՝ 630.4 հազ. դրամի, չափով.

4) ընկերությունը չի պահպանել ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 6-րդ կետի «գ» ենթակետի պահանջը և շահութաբաժնի հաշվարկում շահութաբաժնի հաշվարկման բազան չի ավելացրել շահութաբաժինների (այդ թվում՝ պետական մասնակցության դիմաց) հաշվարկման նպատակով որպես ծախս չընդունված անհատույց կատարված աշխատանքների կամ անհատույց մատուցված ծառայությունների (անվճար մատուցված ուսուցման դասընթացներ) գծով կատարված ծախսերը, որոնք պետք է իրականացվեն շահութաբաժնի հաշվարկումից հետո ընկերության տրամադրության տակ մնացող զուտ շահույթի հաշվին, 2021 թվականին՝ 5,493.0 հազ. դրամ, 2022 թվականին՝ 18,140.3 հազ. դրամ և 2023 թվականին՝ 63,972.0 հազ. դրամ: Վերոգրյալի արդյունքում 2021-2023 թվականների համար լրացուցիչ հաշվարկվել է 13,846.2 հազ. դրամի շահութաբաժին: 2021-2022 թվականների համար լրացուցիչ հաշվարկված շահութաբաժնի գումարների նկատմամբ ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշման 9-րդ կետով սահմանված պատժամիջոցի կիրառման արդյունքում շահութաբաժնի գումարը սահմանված ժամկետում ՀՀ պետական բյուջե չվճարելու համար հաշվարկվել է տույժ 2,011.6 հազ. դրամի չափով:

44. Այսպիսով, ընկերությունում կատարված ստուգման արդյունքներով 2021-2023 թվականների համար ՀՀ պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա

շահութաբաժնի գումարը կազմում է 15,857.8 հազ. դրամ, ներառյալ 2,011.6 հազ. դրամ տույժերի գումարները:

45. Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1) հանձնարարել ընկերությանը՝

ա. ՀՀ առողջապահության նախարարությունում քննության առնել ստուգմամբ արձանագրված փաստերը, միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումներն ու թերությունները վերացնելու և հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ,

բ. ապահովել նախարարության և ընկերության միջև կնքված պայմանագրերի պայմանների կատարումը,

գ. ՀՀ պետական բյուջեին հասանելիք շահութաբաժինները հաշվարկելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն և 2006 թվականի հունիսի 22-ի N 1238-Ն որոշումների պահանջներով,

դ. ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա արձանագրված 1,051.9 հազ. դրամը փոխանցել ՀՀ պետական բյուջեի «նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին, իսկ 15,857.8 հազ. դրամ լրացուցիչ հաշվարկված շահութաբաժնի գումարը փոխանցել ՀՀ պետական բյուջեի «բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենտներ» գանձապետական հաշվին:

46. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 16,909.7 հազ. դրամի խախտման փաստեր, որից վերականգնվել է 3,300.0 հազ. դրամը:

#### 10. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ» ՊՈԱԿ

47. Ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2017 թվականին կազմակերպությունում իրականացված ստուգման արդյունքներով կազմված ստուգման ակտով արձանագրված ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա 40,645.4 հազ. դրամ և 2017 թվականի «Սուբսիդիայի տրամադրման» թիվ 15 պայմանագրի

շրջանակներում տարեկան ծախսերի նախահաշվով ավել նախատեսված 12,840.3 հազ. դրամի չափով նվազեցման ենթակա գումարների գծով 2024 թվականի ապրիլի 4-ի (ստուգման ավարտի օրվա) դրությամբ կազմակերպության կողմից վերականգնումներ և նվազեցումներ չեն կատարվել.

2) խախտվել են «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանի պահանջները, և ստուգվող ժամանակաշրջանում կազմակերպության կողմից ներկայացված «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» (Ձև 2) և «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» (Ձև 4) հաշվետվությունները ներկայացվել են ոչ ճշգրիտ.

3) խախտվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջը, և գործուղման մեկնած աշխատակիցների կողմից գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվություններ չեն կազմվել.

4) խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 390-Ն որոշման N 3 հավելվածով հաստատված կարգի 4-րդ և 9-րդ կետերի պահանջները, և կազմակերպության կողմից 2022 և 2024 թվականների գնումների պլանները Պատվիրատուի ղեկավարի կողմից չեն հաստատվել և տեղեկագրում չեն հրապարակվել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.

5) ՀՀ կառավարության 2019 թվականի հուլիսի 11-ի N 892-Ն որոշման համաձայն՝ «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ին՝ «Կազմակերպությանն ամրացված շենք-շինության օդափոխության համակարգի անցկացման համար» հատկացված 603,965.9 հազ. դրամի շրջանակներում.

ա. խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, և կազմակերպության կողմից «Կազմակերպությանն ամրացված շենք-շինության օդափոխության համակարգի անցկացման» աշխատանքների

ձեռքբերման համար բաց մրցույթի հայտարարության և հրավերին կցված ծավալաթերթերում հստակ նշվել են նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների ֆիրմային անվանումները, մակնիշները և այլ հատկանիշներ,

բ. խախտվել են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ, 42-րդ, 43-րդ կետերի և հրավերի պահանջները, և կազմակերպության գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո՝ հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրություն չի կազմվել, հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններն արձանագրվել են ոչ լիարժեք, մասնավորապես «հաղթող» մասնակցի կողմից ներկայացված մասնակցի հայտում առկա անհամապատասխանությունը, նիստը չի կասեցվել, արձանագրությունը չի հրապարակվել տեղեկագրում և մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում մասնակցի հայտը չի գնահատվել անբավարար և չի մերժվել,

գ. խախտվել է հրավերով սահմանված պահանջը՝ մասնակցի կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի շտկվել անհամապատասխանությունը՝ չի ներկայացվել հրավերով նախատեսված փաստաթղթերը, և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող պատվիրատուի կողմից հինգ աշխատանքային օրվա ընթացքում վերը նշվածի վերաբերյալ լիազորված մարմին չի ուղարկվել մասնակցի տվյալները և համապատասխան հիմքերը,

դ. հանձնման-ընդունման արձանագրություններով և կատարողական ակտերով ստացված քանդման ու տեղափոխման աշխատանքների ծավալների փաստաթղթային ստուգմամբ արձանագրվել է շինադրի հավաքման և տեղափոխման՝ մինչև 12 կմ, աշխատանքների գծով, հանձնման-ընդունման արձանագրություններով և կատարողական ակտերով ավել հաշվարկված և վճարված 5,583.2 հազ դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե,

ե. նկուղային հարկի նախկին սառնամատակարարման և էլեկտրամատակարարման սարքավորումների աշխատանքների գծով հանձնման-ընդունման արձանագրություններով և կատարողական ակտերով ավել է ցույց տրվել և վճարվել թվով 3 կոմպլեկտի ապամոնտաժում՝ գումարով 938.9 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե,

զ. փորձաքննություն անցած նախագծով նախատեսված՝ ցինկապատ պողպատից ուղղանկյուն տարբեր կտրվածքների օդափոխության խողովակների տեղադրման փաստացի կատարված աշխատանքները չեն համապատասխանել վերահաշվարկված նախահաշվով, ծավալաթերթ-նախահաշվով, կատարողական ակտերով ներկայացված և թաքնված աշխատանքների ակտերով արձանագրված աշխատանքների բնույթին, որոնցում թվարկված աշխատանքները նշված են օդատարների տեղադրում կլոր տիպի ցինկապատ պողպատից: Արդյունքում՝ հանձնման-ընդունման արձանագրություններով և կատարողական ակտերով ավել է հաշվարկվել և վճարվել ցինկապատ օդատարների տեղադրում՝ 208 քմ մակերեսով, գումարով 1,588.7 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե,

է. փաստացի տեղադրված սարքեր-սարքավորումները հիմնականում չեն համապատասխանել նախագծով, ծավալաթերթ-նախահաշվով և կապալառուի գնային առաջարկով ներկայացված, կնքված պայմանագրով նախատեսված և կատարողական ակտերով ներկայացված սարքեր-սարքավորումներին (երկիր, մակնիշ, հզորություն, խմ/ժամ, Պա. և այլ): Արդյունքում, խախտվել են կարգի 108-րդ և կապալառուի պայմանագրի պահանջները, և կատարված աշխատանքը պայմանագրի պայմաններին չհամապատասխանելով, պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվել է պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ,

ը. խախտվել են պայմանագրի և կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները, և պայմանագրով նախատեսված աշխատանքների

կատարման ժամկետը երկարաձգելուց հետո (30 օրացուցային օրով) ևս մեկ անգամ երկարաձգվել է,

թ. պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու համար կազմակերպության կողմից թիվ 1 համաձայնագրով սահմանված վերջնաժամկետից հետո չի հաշվարկվել և չի գանձվել տույժ, որը կազմել է 7,243.62 հազ. դրամ և ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե: Միաժամանակ, պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում կապալառուից կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքների գումարի նկատմամբ կազմակերպության կողմից հաշվարկվել է տույժ՝ թիվ 2 համաձայնագրով սահմանված վերջնաժամկետից հետո, որը կազմել է 2,118.1 հազ. դրամ, և կողմերի միջև 2024 թվականի փետրվարի 15-ին կնքվել է համաձայնագիր՝ այն մարելու նպատակով: Համաձայնագրով վճարման ենթակա գումարից կազմակերպության կողմից ստուգման ավարտի օրվա՝ 2024 թվականի ապրիլի 4-ի դրությամբ վճարումներ չեն իրականացվել:

6) կապալառու կազմակերպությունում իրականացված հանդիպակաց ստուգման արդյունքներով արձանագրվել է.

ա. խախտվել է «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի և կազմակերպության միջև կնքված պայմանագրով սահմանված պահանջը, որով կապալառուն պարտավորվել է աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան, սակայն կազմակերպության կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքներն իրականացվել են թվով 2 կազմակերպությունների հետ կնքված ենթակապալի պայմանագրերի միջոցով:

48. Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1) «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ում քննարկման առարկա դարձնել ստուգման ակտով արձանագրված խախտումները և բացթողումները, ինչպես նաև ՀՀ օրենքների և իրավական ակտերի պահանջները չկատարելու

հարցում պաշտոնատար անձանց իրենց պարտականությունների մեջ թերանալու համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

2) ձեռնարկել միջոցներ՝

ա. 2017 թվականին կազմակերպությունում իրականացված ստուգման արդյունքներով 2017 թվականի մայիսի 19-ին կազմված թիվ 15-Ա ստուգման ակտով արձանագրված գումարները ՀՀ պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ,

բ. ստուգմամբ արձանագրված 15,354.4 հազ. դրամը, այդ թվում՝ հանձնման ընդունման արձանագրություններով, կատարողական ակտերով ավել հաշվարկված և վճարված 8,110.8 հազ. դրամը, և պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու համար կապալառուից կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքների գումարի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվող հաշվարկված տույժի 7,243.6 հազ. դրամը ՀՀ պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ.

3) այսուհետ խստորեն պահպանել ՀՀ օրենսդրության պահանջները.

ա. խիստ հսկողություն սահմանել «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների կատարման նկատմամբ,

բ. խիստ հսկողություն սահմանել տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող գործառույթների պատշաճ կատարման նկատմամբ,

գ. խիստ հսկողություն սահմանել հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում իրականացվող գործառույթների պատշաճ կատարման նկատմամբ, թույլ չտալ օրենքով սահմանված չափերից ավելի նախագծային փոփոխությունների և ծավալային համադրումների փաստեր.

4) ապահովել ստուգման արդյունքներով արձանագրված ՀՀ պետական բյուջե վերադարձման ենթակա գումարների վերականգնումը ՀՀ պետական

բյուջեի «նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին:

49. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 15,354.4 հազ. դրամի խախտման փաստեր, որից վերականգնում չի եղել:

#### 11. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

50. Ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1) «Կինեմատոգրաֆիայի ծրագիր»՝ «Կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման ծառայություններ» միջոցառման գծով կնքված պայմանագրով խախտվել է նախահաշվի 27.7-րդ կետի պահանջը՝ նախահաշվով նախատեսվել և հաշվետվությանը ծախս է ներկայացվել փաստացի չկատարված աշխատանք՝ գումարով 260.0 հազ. դրամ, որը ստուգման ընթացքում վերականգնվել է ՀՀ պետական բյուջե.

2) ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 10-ի N 1519-Ն որոշման հիմքով «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ին պատկանող տարածքի հիմնանորոգման համար 2020 թվականի սեպտեմբերի 28-ի պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի շրջանակում.

ա. խախտվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշման N 8 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի պահանջը՝ թվով 2 կազմակերպությունների հետ պայմանագրերը ավել են կնքվել 971.3 հազ. դրամով,

բ. խախտվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 11-րդ ենթակետի պահանջը՝ շինարական աշխատանքների կատարման ընթացքում առաջացել են նախագծային շեղումներ, իրականացվել են սկզբնական նախագծի 10%-ը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքներ, որի համար նախագծողը պատվիրատուին վճարելու է տուգանք 254.8 հազ. դրամ,

գ. կատարողական ակտերի «ջեռուցման և օդափոխության համակարգեր» և «հատակային ներկառուցվող օդափոխություն» բաժիններով ավել է ներկայացվել և վճարվել այլ նյութերի գումար՝ 523.1 հազ. դրամ,

դ. հանձնման-ընդունման արձանագրություններով, կատարողական ակտերով ներկայացված և դրանց դիմաց վճարված շինարարական աշխատանքների ընտրանքային հսկիչ չափագրումներով արձանագրվել է 748.5 հազ. դրամի կատարողական ակտերով հաստատված և վճարված, սակայն փաստացի չկատարված աշխատանքներ,

ե. խախտվել է ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 10-ի N 1519-Ն որոշման 5-րդ կետի պահանջը, այն է՝ նույն որոշման 3-րդ կետում նշված կազմակերպություններին թույլատրվել է անհրաժեշտության դեպքում, նույն որոշմամբ հատկացված գումարների շրջանակներում կնքված պայմանագրերով տնտեսված գումարներն ուղղել անհրաժեշտ գույքի ձեռքբերմանը՝ ձեռք բերվող գույքի ցանկը համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հետ, սակայն նշված ընթացակարգով գույք ձեռք բերելու փոխարեն, տնտեսված 700.0 հազ. դրամով ձեռք է բերվել դիզայներական լուծումների և հիմնավերանորոգման աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի և ներքին հարդարման պարագաների ընտրության խորհրդատվություն, որով խախտվել են ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն և 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշումների 4-րդ կետերի 13-րդ ենթակետերի պահանջները, այն է՝ տնտեսված 700.0 հազ. դրամը չի վերադարձվել ՀՀ պետական բյուջե.

3) «Կինեմատոգրաֆիայի ծրագիր»՝ «Աջակցություն կինոարվեստին միջազգային կինոփառատոններին կինոշուկաներին և կինոնախագծերին մասնակցություն» միջոցառման գծով կնքված պայմանագրով խախտվել են պայմանագրի պահանջները, այն է՝ պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի և նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10% շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը, նախահաշվով նախատեսված «կատալոգի օֆսեթ տպագրություն» ծախսի գծով հաշվետվությամբ ավել է ներկայացվել 59.4 հազ. դրամ, որը համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն

որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետի պահանջի որպես տնտեսված գումար՝ ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե.

4) գնումների գործընթացի ճշտության ստուգմամբ՝

ա. խախտվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 109-րդ կետի պահանջը, այն է՝ ձեռք բերված ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համար պատասխանատու ստորաբաժանումների ներկայացուցիչների կողմից չի կազմվել գրավոր դրական եզրակացություն,

բ. խախտվել են պայմանագրի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները՝ ձեռք բերված ապրանքների գնման պայմանագրի գծով կատարվել է գնման պայմանագրի գնի 15 տոկոսից ավել այլ բնութագիր ունեցող ապրանքների փոխարինում՝ ընդհանուր գումարով 612.0 հազ. դրամ:

51. Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ քննության առնել ստուգման նյութերը.

2) ձեռնարկել միջոցներ ստուգմամբ արձանագրված խախտումների ու թերությունների վերացման, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ.

3) ձեռնարկել միջոցներ ակտով արձանագրված 3,002.3 հազ. դրամը ՀՀ պետական բյուջեի «նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին և 254.8 հազ. դրամը կազմակերպության համապատասխան գանձապետական հաշվին վերականգնելու ուղղությամբ.

4) ՀՀ պետության կողմից դրամաշնորհների ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարներն օգտագործել հաստատված ծրագրերի և պայմանագրերի անբաժանելի մաս կազմող ծախսերի նախահաշվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան, նախահաշվով նախատեսված և փաստացի ծախսերի նկատմամբ իրականացնել պատշաճ հսկողություն.

5) գնման գործընթացը համապատասխանացնել ՀՀ օրենսդրության պահանջներին:

52. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 3,517.1 հազ. դրամի խախտման փաստեր, որից վերականգնվել է 3,262.3 հազ. դրամը:

## 12. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

53. Ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1) խախտվել է ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման 7-րդ կետի պահանջը՝ աշխատակազմին սեփականության իրավունքով պատկանող շենքի տարածքից 208.3 քառ. մետր տարածք ստուգմամբ ընդգրկված ժամանակաշրջանից մինչ օրս զբաղեցնում են աշխատակազմին ոչ ենթակա կազմակերպություններ, այդ թվում ՀՀ ԵԿՄ Արտաշատի բաժանմունքը՝ 17.8 քառ. մետր, ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության Արարատի մարզային մարմինը՝ 86.3 քառ. մետր, ՀՀ փաստաբանների պալատի Արարատի մարզային նստավայրը՝ 34.2 քառ. մետր, ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արարատի տարածքային բաժինը՝ 70.0 քառ. մետր: Ընդ որում նշված կազմակերպությունները տարածքները զբաղեցնում են առանց համապատասխան իրավական հիմքերի: Բացի այդ, նշված կազմակերպությունները չունեն տեղադրված էլեկտրաէներգիայի ծախսի առանձնացված հաշվիչներ, որի արդյունքում աշխատակազմի «Էներգետիկ ծառայություններ» 4212 հոդվածով առաջացել են սեփական կարիքներից ավել ծախսեր, որի հետևանքով խախտվել են նախատեսված և փաստացի ծախսերի չափաքանակները.

2) խախտվել են «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հուլիսի 23-ի N 463-Ն հրամանի 1-ին կետով հաստատված՝ հանրային հատվածի կազմակերպությունների կողմից հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման ժամանակացույցի պահանջները՝ «Համակարգչային ծառայություններ» 4232

հողվածով աշխատակազմի «ՀԾ հաշվապահ 7» ծրագրային ապահովման համար փոխանցվել է 392.0 հազ. դրամ, սակայն աշխատակազմում վերոգրյալ ծրագրով հաշվապահական հաշվառում չի վարվում, կամ աշխատակազմի կողմից կատարվել է նպատակային գործառնություն չհիմնավորված ծախս՝ գումարով 392.0 հազ. դրամ.

3) խախտվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանի N 16 հավելվածով դասակարգման կիրառման կարգի ընթացիկ ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հողվածով սահմանված նպատակայնությունը՝ ՀՀ Արարատի մարզպետի որոշումների համաձայն կատարվել է ոչ նպատակային ծախս՝ ընդհանուր գումարով 4,000.0 հազ. դրամ, մարզի սպորտի ոլորտի նվաճումներ գրանցած լավագույն ներկայացուցիչներին և նրանց մարզիչներին հատկացվել է միանվագ դրամական օգնություն.

4) խախտվել են «Հանրակրթության մասին» օրենքի, «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի, ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման, 2017 թվականի փետրվարի 16-ի N 141-Ն որոշման, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի N 152-Ա/2 հրամանի պահանջները՝ ստուգվող ժամանակաշրջանում հանրակրթական ուսուցման, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների (ներառական) կրթության և նախադպրոցական կրթության ծրագրերի գծով թվով 44 հանրակրթական դպրոցներին աշխատակազմի կողմից ավել է հաշվարկվել և ֆինանսավորվել 26,009.4 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե.

5) «Ապահով դպրոց» 1183 ծրագրի՝ «Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում» 32001 միջոցառման շրջանակում իրականացրած շինարարական աշխատանքների մասով արձանագրվել է ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա ընդամենը 4,937.9 հազ. դրամ գումար, որից հսկիչ չափագրումներով՝ 4,640.2 հազ. դրամ և հաշվարկված տուգանքի գումար՝ 297.7 հազ. դրամ, այդ թվում՝

ա. «ՀՀ Արարատի մարզի Արևշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դպրոցական շենքի ջեռուցման աշխատանքների մասով՝ շինարարական աշխատանքների կատարման ընթացքում առաջացել են նախագծային շեղումներ, որի հետևանքով իրականացվել են սկզբնական նախագծի 10%-ը գերազանցող լրացուցիչ աշխատանքներ ընդհանուր գումարով 876.7 հազ. դրամ: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 11-րդ ենթակետի պահանջի՝ նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի 25%-ը, որը կազմում է 219.2 հազ. դրամ: Հանձնման-ընդունման արձանագրությունով, կատարողական ակտով ներկայացված և դրանց դիմաց վճարված շինարարական աշխատանքների ընտրանքային հսկիչ չափագրումներով արձանագրվել են փաստացի չկատարված աշխատանքներ՝ ընդհանուր գումարով 2,493.8 հազ. դրամ: Նշված ծրագրի շրջանակում արձանագրված ընդհանուր 2,713.0 հազ. դրամ գումարը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե,

բ. «ՀՀ Արարատի մարզի Աբովյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ջեռուցման աշխատանքների մասով՝ հանձնման-ընդունման արձանագրությունով, կատարողական ակտով ներկայացված և դրա դիմաց վճարված շինարարական աշխատանքների ընտրանքային հսկիչ չափագրումներով արձանագրվել են փաստացի չկատարված աշխատանքներ՝ ընդհանուր գումարով 564.3 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե,

գ. «ՀՀ Արարատի մարզի Աբովյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կաթսայատան գազաֆիկացման աշխատանքների մասով՝ հանձնման-ընդունման արձանագրությունով, կատարողական ակտով ներկայացված և դրա դիմաց վճարված շինարարական աշխատանքների ընտրանքային հսկիչ չափագրումներով արձանագրվել են կատարողական ակտերով հաստատված և վճարված, սակայն փաստացի չկատարված աշխատանքներ՝ ընդհանուր գումարով 63.6 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե,

դ. «ՀՀ Արարատի մարզի Տափերականի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնաշենքի սանհանգույցների կառուցման աշխատանքների մասով՝ շինարարական աշխատանքների կատարման ընթացքում առաջացել են նախագծային շեղումներ, որի հետևանքով իրականացվել են սկզբնական նախագծի 10%-ը գերազանցող լրացուցիչ աշխատանքներ ընդհանուր գումարով 314.2 հազ. դրամ, որի դիմաց նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի 25%-ը, որը կազմում է 78.5 հազ. դրամ: Հանձնման-ընդունման արձանագրությունով, կատարողական ակտով ներկայացված և դրանց դիմաց վճարված շինարարական աշխատանքների ընտրանքային հսկիչ չափագրումներով արձանագրվել են 853.7 հազ. դրամի փաստացի չկատարված աշխատանքներ: Նշված ծրագրի շրջանակում արձանագրված ընդամենը 932.2 հազ. դրամ գումարը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե,

ե. «Սայաթ-Նովայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գրադարանի և մարզադահլիճի ընթացիկ նորոգման շինարարական աշխատանքների մասով՝ հանձնման-ընդունման արձանագրությունով, կատարողական ակտով ներկայացված և դրա դիմաց վճարված շինարարական աշխատանքների ընտրանքային հսկիչ չափագրումներով արձանագրվել են փաստացի չկատարված աշխատանքներ՝ ընդհանուր գումարով 176.8 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե,

զ. «Արմաշի Մաղաքիա Օրմանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հարակից տարածքի մետաղական ցանկապատի վերանորոգման աշխատանքների մասով՝ հանձնման-ընդունման արձանագրությունով, կատարողական ակտով ներկայացված և դրա դիմաց վճարված շինարարական աշխատանքների ընտրանքային հսկիչ չափագրումներով արձանագրվել են փաստացի չկատարված աշխատանքներ՝ ընդհանուր գումարով 488.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե.

6) «Տարածքային զարգացում» 1212 ծրագրի՝ «Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծում» 12025 միջոցառման շրջանակում «ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի մանկապատանեկան համալիր

մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենք-շինությունների հիմնանորոգման հետ կապված աշխատանքների մասով արձանագրվել է ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա ընդհանուր 19,968.6 հազ. դրամ գումար: Միաժամանակ.

ա. խախտվել է կապալի պայմանագրի պահանջը՝ պատվիրատուի կողմից չվճարվող 5% գումարից ավել է վճարվել 805.9 հազ. դրամ,

բ. խախտվել է «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին ենթակետի պահանջը՝ հաշվարկված տույժի գումարները, ֆինանսական շարժերը և կրեդիտորական պարտքերը հաշվապահական ձևակերպում չեն ստացել.

7) «Տարածքային զարգացում» բյուջետային ծրագրի «ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրում՝ ենթակառուցվածքների զարգացման նպատակով» միջոցառման շրջանակում համայնքապետարաններում իրականացված հանդիպակաց ստուգումների արդյունքում արձանագրվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների տարաբնույթ խախտումներ՝ ընդհանուր գումարով 47,351.8 հազ. դրամ, որից ՀՀ օրենսդրության պահանջների նկատմամբ ընթացակարգային խախտումներ՝ 22,646.9 հազ. դրամ և վերականգնման ենթակա գումարը կազմել է 24,704.9 հազ. դրամ, այդ թվում՝ ՀՀ պետական բյուջե՝ 10,850.3 հազ. դրամ և համայնքային բյուջեներ՝ 13,854.6 հազ. դրամ, ներառյալ.

ա. ՀՀ Արարատի մարզի Արարատի համայնքապետարանի աշխատակազմում ՀՀ Արարատի մարզի «Արարատ քաղաքային համայնքի զբոսայգու կապիտալ վերակառուցման» միջոցառմամբ իրականացված շինարարական աշխատանքների փաստացի ծավալի չափագրման, շինարարական աշխատանքների վերաբերյալ կնքված պայմանագրերի կատարման ճշտության փաստաթղթային ստուգմամբ և հսկիչ չափագրմամբ արձանագրվել է վերականգնման ենթակա ընդհանուր 6,910.7 հազ. դրամ գումար, որից ՀՀ պետական բյուջե՝ 2,073.2 հազ. դրամ և համայնքային բյուջե՝ 4,837.5 հազ. դրամ,

բ. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմում ՀՀ Արարատի մարզի «Արաքսավան համայնքի նոր պոմպակայանի ու ռոտոգման ցանցի կառուցում» և «Այգեգարդ համայնքի բակետրոլի, թենիսի

դաշտերի կառուցման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ» միջոցառումներով իրականացված շինարարական աշխատանքների փաստացի ծավալի չափագրման և տեղագնման, շինարարական աշխատանքների վերաբերյալ կնքված պայմանագրերի կատարման ճշտության ստուգման արդյունքներով արձանագրվել է ընդհանուր 5,584.2 հազ. դրամ վերականգնման ենթակա գումար, որից ՀՀ պետական բյուջե՝ 909.6 հազ. դրամ և համայնքային բյուջե՝ 4,674.6 հազ. դրամ,

գ. ՀՀ Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանի աշխատակազմում ՀՀ Արարատի մարզի «Մասիս համայնքի Մասիս քաղաքի թիվ 3 մանկապարտեզի կառուցում» և «Դաշտավան համայնքի դպրոցի 2-րդ հարկում մանկապարտեզի կառուցում» միջոցառումներով իրականացված շինարարական աշխատանքների փաստացի ծավալի չափագրման և տեղագնման, շինարարական աշխատանքների վերաբերյալ կնքված պայմանագրերի կատարման ճշտության ստուգման արդյունքներով արձանագրվել են ՀՀ օրենսդրության և պայմանագրային կետերի խախտումներ՝ ընդհանուր գումարով 34,357.1 հազ. դրամ, որից ՀՀ օրենսդրության պահանջների նկատմամբ ընթացակարգային խախտումներ՝ 22,646.9 հազ. դրամ և վերականգնման ենթակա գումար՝ 11,710.2 հազ. դրամ, այդ թվում՝ ՀՀ պետական բյուջե 6,372.7 հազ. դրամ և համայնքային բյուջե՝ 5,337.5 հազ. դրամ,

դ. ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի աշխատակազմում «ՀՀ Արարատի մարզի Գինեվետ համայնքի զբոսայգու վերակառուցում» միջոցառմամբ իրականացված շինարարական աշխատանքների փաստացի ծավալի չափագրման և շինարարական աշխատանքների վերաբերյալ կնքված պայմանագրերի կատարման ճշտության ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա փաստացի չկատարված աշխատանքների 499.8 հազ. դրամ գումար, որի 30%-ը՝ 149.9 հազ. դրամը վերականգնվել է ՀՀ պետական բյուջե, իսկ 70%-ը՝ 349.9 հազ. դրամը համայնքային բյուջե:

54. Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1) ձեռնարկել միջոցներ մարզպետի աշխատակազմի ենթակայության հանրակրթական դպրոցներին՝ հանրակրթական ուսուցման, այդ թվում՝ կրթության

առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների (ներառական) կրթության և նախադպրոցական կրթության ծրագրերի գծով ավել ֆինանսավորված 26,009.4 հազ. դրամ գումարի ՀՀ պետական բյուջե վերականգնման ուղղությամբ.

2) ձեռնարկել միջոցներ «Ապահով դպրոց» 1183 ծրագրի «Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում» 32001 միջոցառման գծով 4,937.9 հազ. դրամ գումարի ՀՀ պետական բյուջե վերականգնման ուղղությամբ.

3) ձեռնարկել միջոցներ «Տարածքային զարգացում» 1212 ծրագրի «Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծում» 12025 միջոցառման գծով 19,968.6 հազ. դրամ գումարի ՀՀ պետական բյուջե վերականգնման ուղղությամբ.

4) ձեռնարկել միջոցներ «Տարածքային զարգացում» բյուջետային ծրագրի «ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրում՝ ենթակառուցվածքների զարգացման նպատակով» միջոցառման շրջանակում ստուգվող ժամանակաշրջանում 22,887.6 հազ. դրամ գումարի ՀՀ պետական բյուջե վերականգնման ուղղությամբ.

5) ՀՀ Արարատի մարզի Արարատի, Արտաշատի, Մասիսի և Վեդու համայնքապետարաններում քննարկման առարկա դարձնել հանդիպակաց ստուգման ակտերով արձանագրված խախտումները և բացթողումները, միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումներն ու թերությունները հետազայում բացառելու ուղղությամբ.

6) ապահովել ստուգման արդյունքներով արձանագրված ՀՀ պետական բյուջե վերադարձման ենթակա գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջեի «նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին:

55. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 75,620.8 հազ. դրամի խախտման փաստեր, որից վերականգնվել է 51,900.9 հազ. դրամը:

### 13. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

56. Ստուգման արդյունքներով արձանագրվել է՝

1) «Տարածքային պետական կառավարում» ծրագրի «ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում» միջոցառման մասով.

ա. խախտվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները, որի արդյունքում 163,0 հազ. դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե, ստուգման ընթացքում վերականգնվել է 22.0 հազ. դրամը,

բ. խախտվել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանի N 16 հավելվածով «Ընթացիկ ծախսերի դասակարգման կիրառման ցուցումների» պահանջները՝ «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածի սահմանված նկարագրությունը և նպատակայնությունը, ստուգվող ժամանակաշրջանում նշված հոդվածով նախատեսված միջոցների հաշվին կատարվել են 1,300.0 հազ. դրամ գումարի ոչ նպատակային ծախսեր,

գ. 2022 թվականի հունվարին «կրկնակի դուրս գրված» վառելիքի գծով ստուգմամբ արձանագրված 238.7 հազ. դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե,

դ. խախտվել են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները,

ե. կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատվիրատուի կողմից չի սահմանվել աշխատանքի կատարման նոր ժամկետ, միակողմանիորեն չի լուծվել պայմանագիրը դրանով սահմանված վերջնաժամկետի դրությամբ,

զ. խախտվել են ընկերության կողմից պատվիրատուին տրամադրված 2023 թվականի սեպտեմբերի 15-ի տուժանքի մասին համաձայնագրի պահանջները՝ որպես պայմանագրի ապահովում, կատարողից չի գանձվել 672.9 հազ. դրամի տուժանքի գումարը, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե,

է. խախտվել են ընկերության կողմից պատվիրատուին տրամադրված 2023 թվականի սեպտեմբերի 15-ի տուժանքի մասին համաձայնագրի պահանջները՝

որպես որակավորման ապահովում, կատարողից չի գանձվել 568.0 հազ. դրամի տուժանքի գումարը, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե,

ը. խախտվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի և ընկերության միջև կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ պայմանագրի պահանջը՝ հաշվարկված 29.0 հազ. դրամ տուգանքը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե.

2) Հանրակրթության ծրագրով, այդ թվում «ընդհանուր հանրակրթություն (տարրական, հիմնական, միջնակարգ)», «ներառական կրթություն (տարրական, միջին, ավագ)» և «նախադպրոցական կրթություն» միջոցառումների մասով խախտվել են «Հանրակրթության մասին» օրենքի, «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի, ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման, 2017 թվականի փետրվարի 16-ի N 141-Ն որոշման, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի N 152-Ա/2 հրամանի պահանջները, որի արդյունքում ստուգվող ժամանակաշրջանում հանրակրթության ծրագրով թվով 31 հանրակրթական դպրոցներին աշխատակազմի կողմից ավել է հաշվարկվել և ֆինանսավորվել 16,268.4 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե.

3) «Ապահով դպրոց» 1183 ծրագրի «Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում» 32001 միջոցառման (դպրոցների ճաշարանների վերանորոգում) մասով.

ա. ՀՀ Գեղարքունիքի մարզի թվով 7 դպրոցների ճաշարանների վերանորոգման շինարարական աշխատանքների փաստացի ծավալների ընտրանքային չափագրումներով և դրանց վերաբերյալ կնքված պայմանագրերի կատարման ճշտության ստուգմամբ արձանագրվել է ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա ընդամենը 6,862.0 հազ. դրամ,

բ. ՀՀ Գեղարքունիքի մարզի թվով 2 դպրոցների շենքերի վերանորոգման աշխատանքների փաստացի ծավալների ընտրանքային չափագրումներով և դրանց վերաբերյալ կնքված պայմանագրերի կատարման ճշտության ստուգմամբ

արձանագրվել է ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա ընդամենը 444.2 հազ. դրամ.

4) «Տարածքային զարգացում» 1212 ծրագրի «ՀՀ մարզերում առաջնահերթ լուծում պահանջող անհետաձգելի ծրագրերի իրականացում» 32001 միջոցառման շրջանակում իրականացված ՀՀ Գեղարքունիքի մարզի թվով 2 բժշկական կենտրոնների շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքների փաստացի ծավալների ընտրանքային չափագրումներով և դրանց վերաբերյալ կնքված պայմանագրերի կատարման ճշտության ստուգմամբ արձանագրվել է ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա ընդամենը 153.1 հազ. դրամ գումար.

5) «Տարածքային զարգացում» բյուջետային ծրագրի «ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրում՝ ենթակառուցվածքների զարգացման նպատակով» միջոցառման շրջանակում համայնքապետարաններում իրականացված հանդիպակաց ստուգումների արդյունքներով արձանագրվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումներ ընդհանուր գումարով 10,684.4 հազ. դրամ, որից վերականգնման ենթակա գումարը կազմում է 10,048.4 հազ. դրամ, այդ թվում ՀՀ պետական բյուջե՝ 6,057.95 հազ. դրամ (որից 636.0 հազ. դրամը ստուգման ընթացքում վերադարձվել է ՀՀ պետական բյուջե) և համայնքային բյուջեներ՝ 3,990.45 հազ. դրամ:

57. Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1) ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմում քննարկման առարկա դարձնել ստուգման ակտով արձանագրված խախտումները և բացթողումները, և ձեռնարկել միջոցներ դրանց վերացման և շտկման ուղղությամբ, մասնավորապես.

ա. սեղմ ժամկետում անցնել ՀՀ օրենսդրության պահանջներով սահմանված հաշվապահական հաշվառման վարմանը,

բ. ապահովել «Տարածքային պետական կառավարում» ծրագրի «ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում» միջոցառման մասով 1,649.6 հազ. դրամ գումարի վերականգնումը ՀՀ պետական բյուջե,

գ. ապահովել մարզպետի աշխատակազմի ենթակայության հանրակրթական դպրոցներին՝ հանրակրթական ուսուցման, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների (ներառական) կրթության և նախադպրոցական կրթության միջոցառումների գծով ավել ֆինանսավորված 16,268.4 հազ. դրամ գումարի վերականգնումը ՀՀ պետական բյուջե,

դ. ապահովել «Ապահով դպրոց» 1183 ծրագրի «Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում» (դպրոցների ճաշարանների վերանորոգում) 32001 միջոցառման գծով 6,862.0 հազ. դրամ գումարի վերականգնումը ՀՀ պետական բյուջե,

ե. ապահովել «Ապահով դպրոց» 1183 ծրագրի «Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում» 32001 միջոցառման գծով 444.2 հազ. դրամ գումարի վերականգնումը ՀՀ պետական բյուջե,

զ. ապահովել «Տարածքային զարգացում» 1212 ծրագրի «ՀՀ մարզերում առաջնահերթ լուծում պահանջող անհետաձգելի ծրագրերի իրականացում» 32001 միջոցառման գծով 153.12 հազ. դրամ գումարի վերականգնումը ՀՀ պետական բյուջե,

է. ապահովել «Տարածքային զարգացում» բյուջետային ծրագրի «ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրում՝ ենթակառուցվածքների զարգացման նպատակով» միջոցառման շրջանակում 10,048.4 հազ. դրամ գումարի վերականգնումը ՀՀ պետական և համայնքային բյուջեներ,

ը. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքապետարաններում քննարկման առարկա դարձնել հանդիպակաց ստուգման ակտերով արձանագրված խախտումները և բացթողումները, միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումներն ու թերությունները հետազայում բացառելու ուղղությամբ: Մասնավորապես, յուրաքանչյուր ծրագրի գծով կոնկրետ նախագծող, տեխնիկական, հեղինակային հսկողություն իրականացնող և կապալառու կազմակերպությունների հետ քննարկել արձանագրված խախտման փաստերը և համապատասխան միջոցներ ձեռնարկել արձանագրված գումարների՝ համայնքների և ՀՀ պետական բյուջե վերականգնման ուղղությամբ: Վերահսկողություն սահմանել տեխնիկական և հեղինակային

հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող գործառնությունների պատշաճ կատարման նկատմամբ:

58. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 36,083.7 հազ. դրամի խախտման փաստեր, որից վերականգնվել է 19,103.0 հազ. դրամը:

#### 14. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ

59. Ստուգման արդյունքներով արձանագրվել է.

1) Պետական գույքի հաշվառման, գույքագրման, գնահատման, անշարժ գույքի պահառության, սպասարկման աշխատանքների և աճուրդների իրականացման ծառայություններ 1079-11003 միջոցառման մասով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրով իրականացված շինարարական աշխատանքների փաստացի ծավալների հսկիչ չափագրմամբ, հանձնման-ընդունման արձանագրություններով ու կատարողական ակտերով հաշվարկված և վճարված, սակայն փաստացի չկատարված աշխատանքների արդյունքում առաջացել է ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա 1,252.0 հազ. դրամ գումար.

2) Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր 1079-31002 միջոցառման մասով՝ խախտվել է ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի N 1710-Ա որոշման 5-րդ կետի սահմանված պահանջը՝ հողամասի օտարումից ստացված գումարի փաստացի վերաբաշխման արդյունքում համայնքային ֆոնդային բյուջե ավել է փոխանցվել 10,930.1 հազ. դրամ, որը ենթակա է վերադարձման ՀՀ պետական բյուջեի «շենքերի և շինությունների օտարման գործընթացում պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարումից մուտքեր» գանձապետական հաշվին.

3) Արվեստների ծրագիր 1168 «Մարզահամերգային համալիրի պահպանություն» (ապարատի պահպանում) միջոցառման մասով խախտվել են ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 629-Ն որոշմամբ հաստատված ՀՀ պետական բյուջեի նախագծում Հայաստանի Հանրապետության պետական

մարմինների գծով բյուջետային ծախսերի առանձին տեսակների՝ ջեռուցման, վառելիքի և էլեկտրաէներգիայի ձեռքբերման ծավալների հաշվարկման հիմքում դրվող նորմաների և ՀՀ կառավարության յուրաքանչյուր տարվա բյուջետային ուղերձի «Ծախսերի կանխատեսում» բաժնի «Ծախսերի ծրագրավորման սկզբունքները ըստ առանձին ծախսային ուղղությունների» հատվածով սահմանված նորմի պահանջները, որոնց արդյունքում ստուգվող ժամանակահատվածում օրենսդրությամբ հաշվարկված ծախսից ավել կատարված փաստացի ծախսի գումարը կազմել է 46,843.0 հազ. դրամ, որը ենթակա է նվազեցման 2025 թվականի «Մարզահամերգային համալիրի պահպանության» դրամաշնորհի պայմանագրով նախահաշվի «Էներգետիկ ծառայություններ» 4212 հոդվածով նախատեսվող ֆինանսավորման գումարից.

ա. խախտվել են ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանի պահանջները՝ ընկերության կողմից կոմիտեին ներկայացված ֆինանսական հաշվետվությունները ներկայացվել են ոչ ճշգրիտ, մասնավորապես՝ դրամարկղային ծախսը հաշվետվությամբ ավել է ներկայացվել 510.2 հազ. դրամի չափով,

բ. խախտվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշմամբ հաստատված կարգը՝ ծավալաթերթ-նախահաշվում նախատեսված աշխատանքների գնագոյացումը բաժանվել է աշխատանքի և նյութածախսի, իսկ արդյունքում ներկայացված աշխատանքի գները և դրանց համապատասխան նյութածախսը չի համապատասխանում ՇՆևԿ-ի նորմատիվներին,

գ. խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև պայմանագրով սահմանված պահանջները՝ «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում վերանորոգման» և «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի շենքի ճակատային մասերի կոսմետիկ նորոգման» աշխատանքների պայմանագրերը կնքվել են առանց գնման ընթացակարգեր իրականացնելու,

դ. խախտվել են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգի 16-րդ կետի պահանջները՝ գնման

գործընթացն սկսելու համար գնման առարկաները, տվյալ դեպքում «վերանորոգման և համալիրի շենքի ճակատային մասերի կոսմետիկ նորոգման» աշխատանքները ներառվել են գնումների պլանում ավելի ուշ, իսկ գնման պայմանագրերը կնքվել են մինչև գնումների պլանում ներառվելը,

ե. խախտվել են կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ պարբերությունների, 34-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտով չի հիմնավորվել գնումների բազային միավորը գերազանցելու պարագայում մեկ անձից գնում կատարելու և միևնույն մասնակցի կողմից ներկայացված բարձր «նախահաշվային-գնային» առաջարկի արդյունքում պայմանագիր կնքելու պայմանները,

զ. խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից գնման առարկայի տեխնիկական բնութագրերում ամբողջությամբ և հստակ չի նկարագրվել ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունը՝ պատվիրատուի կողմից չի պահանջվել «բարձր որակի բազալտ» որակավորումը հիմնավորող համապատասխանության սերտիֆիկատը,

է. խախտվել են պայմանագրի 1.2-րդ կետով և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից յուրաքանչյուր ամիս պաշտոնապես հրապարակվող «Շինարարական նյութերի, կոնստրուկցիաների և պատրաստվածքների կողմնորոշիչ գները» սահմանող ցանկի չափման միավորներով և արժեքներով, և «Քաղաքացիական օրենսգրքի» 741-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ կապալառուի կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքները չեն կատարվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան,

ը. խախտվել է ծառայությունների մատուցման պայմանագրի 2.4.1-ին կետի պահանջը՝ տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության կողմից վերանորոգման աշխատանքների տեխնիկական և որակի հսկողության ծառայությունները չեն մատուցվել ՀՀ գործող օրենսդրության, մասնավորապես Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 1998 թվականի ապրիլի 28-ի թիվ 44 հրամանի պահանջներին համապատասխան,

թ. խախտվել է պայմանագրով սահմանված պահանջը՝ կապալային աշխատանքների իրականացման համար փաստաթղթային ստուգմամբ արձանագրվել է հանձնման-ընդունման արձանագրություններով և ներկայացված կատարողական ակտերով ավել հաշվարկված և փաստացի վճարված ընդհանուր 2,928.0 հազ. դրամ գումար, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե,

ժ. խախտվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 752-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ կապալառուի կողմից թույլ են տրվել նախահաշվային փաստաթղթերով և պայմանագրի կողմերի համար պարտադիր շինարարական նորմերով և կանոններով նախատեսված պահանջներից շեղումներ,

ժա. խախտվել է պայմանագրի պահանջը՝ կապալառուի կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքները իրականացվել են քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին ոչ համապատասխան, իսկ առանձին դեպքերում «տեղադրված» ապրանքների համապատասխանության սերտիֆիկատներ ստուգմանը չեն ներկայացվել, որով չի հիմնավորվել տվյալ գործարքների արժանահավատությունը,

ժբ. խախտվել են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 1998 թվականի ապրիլի 28-ի թիվ 44 հրամանի 5.1-ին և 5.2-րդ կետերի պահանջները՝ կապալառուի կողմից չեն կազմվել ծածկված աշխատանքների ակտեր,

Ժգ. խախտվել է ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանի 64-րդ կետի պահանջը՝ աշխատանքների վարման մատյանը չի վարվել սահմանված պահանջներին համապատասխան,

Ժդ. խախտվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգի 33-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարման համար պատվիրատուի կողմից չի հաշվարկվել տուգանք՝ գումարով 288.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե,

Ժե. շինարարական աշխատանքների ծավալների հսկիչ չափագրումների արդյունքում արձանագրվել են հանձնման-ընդունման արձանագրությունով և կատարողական ակտով հաշվարկված և դրա դիմաց վճարված, սակայն փաստացի չկատարված աշխատանքներ գումարով 4,737.64 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե,

Ժզ. խախտվել է ապրանքի մատակարարման պայմանագրի պահանջը, որով մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանել պայմանագրի պայմաններին, իսկ պայմանագրի համաձայն հաշվարկված տուգանքը կազմում է 19.8 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

60. Ստուգման արդյունքներով առաջարկվել է.

1) խիստ հսկողություն սահմանել պետական գույքի օտարումից գոյացած մուտքերի համամասնությունների բաշխման և համապատասխան գանձապետական հաշիվներին փոխանցման նկատմամբ.

2) «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ և «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի ղեկավարության մասնակցությամբ քննարկման առարկա դարձնել համապատասխան հանդիպակաց ստուգման ակտերով արձանագրված խախտումների և բացթողումների վերացման և դրանք բացառելու, ինչպես նաև ՀՀ օրենքների և իրավական ակտերի պահանջները պաշտոնատար անձանց (պատասխանատու ստորաբաժանումներ) իրենց պարտականությունների մեջ թերանալու կամ չկատարելու համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

3) այսուհետ խիստ հսկողություն սահմանել «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բյուջետային հայտերի (ապարատի պահպանման ծախսերի մասով) հիմքում ընկած՝ մասնավորապես «Էներգետիկ ծառայություններ» 4212 հոդվածի գծով կատարվող ծախսերի հաշվարկների ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանեցման նկատմամբ.

4) Պետական գույքի կառավարման կոմիտեին՝ որպես «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի «Մարզահամերգային համալիրի պահպանության» դրամաշնորհի պայմանագրի կողմ հանդիսացող և նախահաշիվը հաստատող պետական լիազոր մարմին ստուգման արդյունքներով արձանագրված՝ օրենսդրությամբ հաշվարկված ծախսից ավել կատարված 46,843.0 հազ. դրամ փաստացի ծախսի գումարը նվազեցնել 2025 թվականի «Մարզահամերգային համալիրի պահպանության» դրամաշնորհի պայմանագրով նախահաշվի «Էներգետիկ ծառայություններ» 4212 հոդվածով նախատեսվող ֆինանսավորման գումարից.

5) տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից հաստատված կատարողական ակտերում տեղ գտած հավելագրումների և անհամապատասխանությունների փաստերի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել լիազոր մարմին.

6) քննարկել «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ 2024 թվականի ապրիլի 11-ին կնքված «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի կարողությունների զարգացման դրամաշնորհի» պայմանագրի շրջանակում կնքված գնման պայմանագրերով ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման առանձին գործարքների անարժանահավատության նկատմամբ իրավական գնահատական տալու գործընթացի նպատակահարմարությունը.

7) ձեռնարկել միջոցներ արձանագրված 9,205.64 հազ. դրամ գումարը ՀՀ պետական բյուջեի «նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին վերականգնելու ուղղությամբ:

61. Այսպիսով, ստուգման արդյունքներով արձանագրվել են վերականգնման ենթակա 20,156.5 հազ. դրամի խախտման փաստեր, որից վերականգնվել է 10,949.9 հազ. դրամը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ